



ՄԵԱԿՈՅԹՆ ՈՒ ԲԱՂԱԲԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Խաչիկ Փիլիկեան

Բազմիցս արտայայտուած եմ որ մշակոյթը մարդու ազատութեան տենչի արտայայտութիւնն է ու յաւիտեան գոյութիւն պիտի ունենայ որքան որ մարդը գոյ է: Քաղաքակրթութիւնը այդ ազատութեան տենչը ոռճացնող և ազատութիւնը իրականացնող ոյժն է:

Չայնային մշակոյթի արգասիքն է ԳԻՐԻ մշակոյթը: Գիր-մշակոյթն էր ծնած Տիր չաստուածը՝ դիցազն Հայկի որդին, Արամազդի գրագիրն ու սուրհանդակը, արուեստներու ու գիտութեան չաստուածը, պատգամաբերն ու լրագրողը, այլ խօսքով՝ դիցաբանական մշակոյթի գործիչը, խորհուրդ-միտք ձեւակերպողն ու ազատագրողը:

Այո՛, մենք ունէինք գրոց մշակոյթ, որուն ծնունդն էր դիցաբանական Տիրը՝ ստեղծագործ այրը: Եւ մենք ունեցանք հայ գիրի ՏԻՐԱՅՐԸ՝ Մեսրոպ Մաշտոցը, որ եղաւ մեր առաջին Անյաղթը՝ ազատագրող ուսուցիչը հայոց բազմադարեան գրոց մշակոյթին:

Եւ իմանալով «գրանս հանճարոյ» խրատեցինք մակագրել խաղաղութեան պատգամաբեր Սուրբ Փրկիչի մօր հայանունը, և Ատուածածինը անուանեցինք նաեւ Տիրամայր, այինքն և բազմիմաստնօրէն Գրոց Գիրերու Աստուծոյ Մայր:

Հայոց այբուբենը հայոց միտք-ձայնի գեղեցկագոյն միասնութեան ազատագրուած ձեւն է, Ազատ Ձեւը հայ հանճարի պատկերփին: Եւ արդէն հայ ժողովուրդի իմաստութիւնն է անուանած «Սուրբ» իր «ազատն ձեւի» գիտարար Մեսրոպ Մաշտոցը:

Պատմական ճշմարտութիւն մըն է թէ ժողովուրդն է մշակոյթի ամենամեծ ստեղծողը: Իսկ ժողովուրդի արդար ու ազատ կեանքի վառ ապագայ ստեղծելու հազարամեայ արգասիքն է նաեւ այն, որ ազատագրող ուսուցիչն է քաղաքա-

Տիրայր Մաշտոցի ուսանող-մեկնիչներ՝ ստեղծագործ մեկնաբանները համաշխարհային մշակոյթի զանձերուն:

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԽՈՐՀՈՒՐԴՆ էր այդ՝ հայ գիրի քաղաքակրթութեան իր առաջին ՌԻՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ:

Ճիշտ է ընկալած և գիտակցած հայը, որ մեր հայ լեզուի հին ու նոր մշակները՝ վարդապետն ու փիլիսոփան, գիտնականն ու բանաստեղծը, արհեստաւորն ու արուեստագէտը, ծնողն ու զաւակը եղած են ու պիտի ըլլան Հայոց Խորհուրդի Թարգմանիչները յանձինս Հայ Ազատն Ձեւին՝ այբուբենին:

Հայ ժողովուրդի մշակոյթին հետ շաղախուած մեր Եռամեծար Վարդապետն ալ, ունենալով ու լաւագոյնս գործադրելով մեր «իբրեւ արծի սաւառնող» ազատութեան հերոս Անդրանիկի յորդորած հեռատեսութիւնն ու իմաստութիւնը, ազատագրող ղօղանջներ սերմանեց Հայ երաժշտութեանը:

Հայերս ձայնային մշակոյթ ունէինք Կոմիտասով՝ Հայ երգի Մաշտոցով ունեցանք և ունինք ձայնային քաղաքակրթութիւն:

Եւ հայն ունի երիցս ծաղկեցուած՝ ազատագրող դարաւոր քաղաքակրթութիւն:

Այդ քաղաքակրթութեան կաթնաղբիւրով սերմնացած, դիցազուն Վարդանանց ալ գերազանցելով, Սարդարապատի «լինել թէ չլինել»ու ճակատամարտին «լինել» որոշեցինք ու վերապրեցանք:

Մեր ծաղկեցուած քաղաքակրթութեամբ ազատագրեցինք նաեւ Արարատեան դաշտի «Նշխարիը որպէս Երիցս վերածնած Հայոց Տուն-Տիրամայր Հանրապետութիւնը:

Այդ նշխարով հաղորդուելով, լիցքաւոր-ւեցանք խորին խորհուրդի ուժականութեամբ, ազատագրելով նաեւ Հայոց Արցախեան Դաշտի «Նշխարն» ալ: